Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2024 թ. որոշմամբ
«ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱ 10/7
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00375
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2004-08-31
1.5 ՀՎՀՀ-ն		02574353
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)010201840
		+(374)099537220
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.af4sd.org
1.8 Էլեկտրոնային փոստը		info@af4sd.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արփինե Ստեփանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Վերադարձ Ակունքներին	30,317,138
	Ֆրանկոֆոնիա 2023	1,324,484
	Խոցելի կանանց հզորացումը Հայաստանում	21,365,169
	Կանանց հզորացումը Հայաստանում	24,994,282

	Ֆրանսերենի դասասենյակ	1,300,000
	Արցախյան պատերազմում զոհված կամ հաշմանդամություն ստացած զինծառայողների կանանց հզորացումը Հայաստանում	8,535,180
	Սոցիալական կրթաթոշակների հատկացում Ֆրանսիական համալսարանի ուսանողներին	2,613,120
	Աջակցություն բռնի տեղահանված արցախցիներին	3,601,960
	Կարողությունների հզորացում	1,720,540
	Աջակցություն Արցախյան պատերազմում զոհված զին. ծառայողների կանանց	864,492
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Վերադարձ Ակունքներին	28,442,228	
Ֆրանկոֆոնիա 2023	1,324,484	
Խոցելի կանանց հզորացումը Հայաստանում	21,365,169	
Կանանց հզորացումը Հայաստանում	24,994,282	
Արցախյան պատերազմում զոհված կամ հաշմանդամություն ստացած զինծառայողների կանանց հզորացումը Հայաստանում	8,535,180	
Սոցիալական կրթաթոշակների հատկացում Ֆրանսիական համալսարանի ուսանողներին	2,613,120	
Աջակցություն բռնի տեղահանված արցախցիներին	3,601,960	
Կարողությունների հզորացում	1,720,540	
Աջակցություն Արցախյան պատերազմում զոհված զին. ծառայողների կանանց	864,492	
Սպորտային սերունգ 2022	9,542,397	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	117,875,855	

13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	103,003,852

Նշումներ՝

Կից ներկայացվում է անկախ աուդիտորի եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունը 18 թերթից

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____18____ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023թ.

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շայույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 treet
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

26.06.2024թ.

N *022416*

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
"Բեյքեր Թիլլի Արմենիա" ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կայուն Զարգացման Հայկական
Հիմնադրամի Հոգաբարձուներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում եմ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի

Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան ուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Պոնամարև

26.06.2024 թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	*Ծանոթագրություն*	2023թ.	2022թ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	64,788	53,792
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*64,788*	*53,792*
Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր		628	978
Տրված ընթացիկ կանխավճարներ	4	754	2,209
Անավարտ արտադրություն			
Դեբիտորական պարտքեր	5	3,171	1,133
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	8,839	16,305
Այլ ընթացիկ ակտիվներ	7	790	1,601
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*14,182*	*22,266*
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		78,970	76,018
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	64,788	53,792
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*64,788*	*53,792*
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր գնումների գծով		286	243
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	9	913	852
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	11,561	21,248
Ընթացիկ պահուստներ	11	1,142	2,939
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*13,902*	*25,282*
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		78,690	79,074
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված արդյունք		280	(3,056)
Ընդամենը զուտ ակտիվներ		*280*	*(3,056)*

Թարոյան Շուշանիկ
Գործադիր տնօրեն

Վարդանյան Ռուզաննա
Գլխավոր հաշվապահ

26.06.2024թ.

1-16 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություն	2023թ.	2022թ.
Եկամուտներ			
Ծառայությունների մատուցումից հասույթ		7,620	5,757
Գործառնական եկամուտներ	12	127,507	110,723
Ընդամենը գործունեությունից եկամուտներ		*135,127*	*116,480*
Ծախսեր			
Մատուցած ծառայությունների ինքնարժեք		(11,197)	(16,251)
Վարչական ծախսեր	13	(14,469)	(18,882)
Գործառնական ծախսեր	14	(104,821)	(75,222)
Ընդամենը գործունեությունից ծախսեր		*(130,487)*	*(110,355)*
Այլ ոչ գործառնական օգուտ/ (վնաս)	15	781	(4,928)
Շահութահարկի գծով ծախս		(2,085)	(1,887)
Ընդամենը շահույթ		*3,336*	*(690)*
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		*3,336*	*(690)*

1-16 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.	(3.056)	(3,056)
Տարվա շահույթ	3.336	3,336
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2023թ.	280	280

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Զուտ շահույթ	3,336	(690)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն	1,002	856
Արձակուրդային գումարների գծով պահուստի ձևավորման ծախս(հակադարձում)	-	-
Հիմնական միջոցների դուրս գրման ծախս	254	-
Հիմնական միջոցների վաճառքից	(3,029)	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	1,563	166
Անավարտ արտադրություն՝ (աճ)/նվազում	811	2,249
Հումք, նյութեր	350	(584)
Դեբիտորական պարտքեր՝ (աճ)/նվազում	(583)	(2,772)
Կրեդիտորական պարտքեր՝ աճ/(նվազում)	104	23
Եկամուտներին վերաբերող շնորհներ՝ աճ/(նվազում)	(9,687)	19.485
Ակտիվներին վերաբերող շնորհներ՝ աճ/(նվազում)	10,996	41
Այլ ընթացիկ պահուստներ	(1,797)	(13,839)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**194**	**4,603**
Հիմնական միջոցի ձեռք բերում	(12,252)	(897)
Հիմնական միջոցի վաճառքից	3,029	-
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(9,223)**	**(897)**
Զուտ աճ/նվազում դրամական միջոցներում և դրանց համարժեքներում	(7,466)	3,872
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	16,305	12,433
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	8,839	16,305

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ֆրանս-Հայկական զարգացման հիմնադրամը հիմնվել է 2004թ. օգոստոսի 31-ին իսկ 2018թ. դեկտեմբերի 12-ից անվանափոխվել և դարձել է Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամ:

Հիմնադրամի գործունեության նպատակն է.
- աջակցել սոցիալական, մշակութային և կրթական գիտական նախաձեռնությունների իրականացմանը,
- ստեղծել, խթանել և ֆինանսավորել սոցիալական, մշակութային, կրթական, գիտական և դրանց առնչվող ոլորտներում զարգացման ծրագրեր

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված է Հիմնադրամի հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն: Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները ներկայացված են հայկական դրամով:

Հիմնադրամի սկզբնական գույքի և շնորհների մասով եկամուտներ

Հիմնադրամի սկզբնական գույքի և շնորհների մասով ստացված գումարները սկզբում ձևակերպվում են որպես շնորհների և դրանց ֆինանսավորմանը վերաբերող պարտավորություններ: Դրանք ճանաչվում են եկամուտ այն ժամանակաշրջաններում, երբ այդ շնորհներին վերաբերող ծախսերը հաշվեգրվում են Հիմնադրամի կողմից:

Գնահատումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՆՄՍ-ի համաձայն պահանջում է տնօրեններից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ակտիվների և պարտավորությունների ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Նշանակալի գնահատումներ են կատարվել հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները որոշելիս: Չնայած այն բանին, որ գնահատումների հիմքում ընկած են ընթացիկ իրադարձությունների և գործողությունների վերաբերյալ տնօրենների լավագույն պատկերացումները, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված բոլոր հոդվածները չափվում են հայկական դրամով , որը Հիմնադրամի հիմնական արժույթն է:

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը և վնասը ճանաչվել է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Հիմնադրամի կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	31 Դեկտեմբեր 2023թ.	*31 Դեկտեմբեր 2022թ.*
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404,79	393.57
ՀՀ դրամ/1 ԵՎՐՈ	447,9	420.06

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Սկզբնական արժեքն ընդգրկում է ակտիվներն իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված բոլոր ծախսումները:
Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Հիմնական միջոցների դաս	*Տոկոս*
Տրանսպորտային միջոց	20
Մեքենա սարքավորումներ	20
Համակարգչային տեխնիկա	20
Գրասենյակային գույք	20

Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Հիմնական միջոցների իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն, և ներառվում է ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվության մեջ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Արժեզրկում

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվեկշռի ամսաթվի դրությամբ վերանայում է իր ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ գնահատելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվները կարող են արժեզրկված լինել: Եթե առկա են այդպիսի հայտանիշներ, ապա Հիմնադրամը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարները արժեզրկումից կորուստների (եթե առկա են այդպիսիք) չափը գնահատելու համար:
Փոխհատուցվող գումարն ակտիվի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև նրա վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կհաշվարկվեր, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր

Կանխավճարները մատակարարներին և կապալառուներին պայմանագրի իրագործման սկզբում վճարված գումարներն են: Այս կանխավճարները աստիճանաբար նվազեցվում են պայմանագրի իրագործման յուրաքանչյուր փուլում:

Դեբիտորական պարտքերի պահուստավորումը կատարվում է դրանց կասկածելի դառնալուն պես:

Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով: Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում նաև ստացված կանխավճարները:

Հարկեր

Հարկերը հաշվարկված են ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Եկամտի ճանաչում

2023թ. ֆինանսական տարվա ընթացքում Հիմնադրամը իրականացրել է դրամաշնորհային ծրագրեր:

Վերոնշյալ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացված եկամուտների հաշվին Հիմնադրամը կատարել է ծախսեր և որի չափով էլ համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային թիվ 20 ՝՝Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում՝՝ ստանդարտի՝ կատարվել է եկամտի ճանաչում:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար դրամ)

	Տրանսպոր. միջոցներ	Համակարգչային սարքավորումներ,կառուցվածքներ	Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ	Հողամաս	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,193	8,709	7,949	52,045	92896
Ավելացում	100	493	304	-	897
Նվազեցում	(578)	2,325	(221)	-	(3,124)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,715	6,877	8,032	52,045	90,669
Ավելացում	10,906	897	449	-	12,252
Նվազեցում	(8,564)	(1,928)	(20)		(10,512)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,057	5,846	8,461	52,045	92,409
Մաշվածք					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,405	8,101	7,639	-	39,145
Տարեկան մաշվածություն	314	331	211	-	856
Նվազեցում	(578)	(2,325)	(221)	-	(3,124)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,141	6,107	7,629		36,877
Տարեկան մաշվածություն	559	297	146	-	1,002
Նվազեցում	(8,524)	(1,714)	(20)		(10,258)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,176	4,690	7,755		27,621
Զուտ հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*574*	*770*	*403*	*52,045*	*53,792*
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*10,881*	*1,156*	*706*	*52,045*	*64,788*

4. ՏՐՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Հայպոստ ՓԲԸ	1	2
''Սփյուռ'' ՍՊԸ	-	84
Ֆլեշ ՍՊԸ	-	2
Վեգա ուորլդ ՍՊԸ	-	315
Ֆրանս -Հայկական Ուսումնական կենտրոն	-	1,548
Ռոսգոսստրախ Արմենիա	-	258
Լիգա Ինշուրանս	534	-
Լիանա Կարապետյան ԱՁ	219	-
Ընդամենը	754	2,209

5. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	358	823
Արև բարեգործական կազմակերպություն	2,791	-
Դեբիտորական պարտքեր այլ վճարների գծով	2	10
Այլ դեբիտորական պարտքեր	20	300
Ընդամենը	3,171	1,133

6.ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Կանխիկ դրամ	-	90
Ընթացիկ հաշիներ բանկերում	8,839	16,215
Ընդամենը	8,839	16,305

7.ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Անավարտ ծառայություններ	790	1,601
Այլ	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**790**	**1,601**

2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ անավարտ ծառայությունները իրենցից ներկայացնում են ՆԻՖԳ հայաստանյան ներկայացուցչության համար չավարտված ծառայությունների գումարները:

8.ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 1 հունվար	53,792	53,751
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	-	-
Եկամուտներին վերաբերող շնորհներից գումարի տեղափոխում	12,252	897
Շնորհի ճամաչումը որպես եկամուտ	(1,256)	(856)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**64,788**	**53,792**

9. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԲՅՈՒՋԵԻՆ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք ոչ ռեզիդենտի շահութահարկի հարկի գծով	27	-
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք շահութահարկի գծով	886	852
Ընդամենը	**913**	**852**

10. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 1 հունվար	**21,248**	**1,763**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	115,246	99,924
Գումարների տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին	(12,252)	(897)
Տարվա ընթացքում օգտագործված շնորհի գումարը	(111,061)	(79,506)
Շնորհի հետ վերադարձ	(1,620)	(36)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**11,561**	**21,248**

11.ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Աուդիտի պահուստ	720	720
Արձակուրդային գումարների գծով պահուստ	422	2,219
Ընդամենը	**1,142**	**2,939**

12. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Եկամուտներ դրամաշնորհներից և այլ	124,447	101483
Հիմնական միջոցի վաճառքից	3,029	-
Արձակուրդայինի գծով պահուստի հակադարձումից	-	9,240
Արտարժույթի փոխանակումից	31	-
Ընդամենը	**127,507**	**110,723**

13. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(2,641)	(2,421)
Փոստ, հեռախոս և ինտերնետ	(1,070)	(1,471)
Պահուստի գծով ծախս	(868)	(720)
Աշխատավարձ	(3,151)	(8,640)
Գործուղման ծախսեր, ներկայացուցչական ծախսեր	(31)	-
Աուդիտի և հաշվապահության վճար	(900)	(1,500)
Հիմնական միջոցների պահպանման և վերանորոգում	(1,487)	(661)
Մաշվածություն	(1,002)	(856)
Բանկային ծախսեր	(84)	(122)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(592)	-
Ապահովագրական ծախսեր	(553)	1,634)
Այլ	(2,090)	(1,307)
Ընդամենը	**(14,469)**	**(18,882)**

14. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	(1,563)	(1,302)
Դրամաշնորհային և այլ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսեր	(103,004)	(73,920)
Այլ գործառնական ծախսեր	(254)	-
	(104,821)	**(75,222)**

15.ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՕԳՈՒՏ/(ՎՆԱՍ)

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Արտարժ. փոխարժեք. տարբերությ. եկամուտներ	1,861	1,597
Արտարժ փոխարժեք. տարբերությ. ծախսեր	(1,080)	(6,525)
	781	**(4,928)**

16.ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Իրավական

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի հանդեպ դատական հայցեր չկան:

բ) Հարկային պայմանականություններ

Հարկային պարտավորությունների կատարումը ենթակա է հարկային մարմինների կողմից ստուգման և վերանայման, որոնք օրենքով լիազորված են խիստ տույժեր և տուգանքներ կիրառել:

Այս հանգամանքը Հայաստանում, ավելի քան այլ երկրներում, ստեղծում է հարկային ռիսկեր: Ղեկավարությունը հավատացած է, որ հիմնվելով հարկային օրենսդրության իր մեկնաբանության վրա, հարկային պարտավորությունները պատշաճ կերպով կատարվում են: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինները կարող են այլ մեկնաբանություններ ունենալ՝ վերջինիս բխող հետևանքներով:

գ) Ապահովագրություն

Հայաստանի ապահովագրական ընկերությունները դեռևս զարգացման փուլում են, և ապահովագրական պաշտպանության շատ ձևեր, որոնք լայն տարածում ունեն այլ երկրներում, դեռևս առկա չեն Հայաստանում: Հիմնադրամը չունի իր հիմնական միջոցների ապահովագրությունը, ապահովագրված չէ սեփականության հետ կապված երրորդ կողմի պարտավորությունների և Հիմնադրամի ակտիվների կամ գործունեության հետ կապված շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման դիմաց: Մինչ Հիմնադրամը ձեռք կբերի համապատասխան ապահովագրություն, որոշ ակտիվների կորուստը և վնասվածքը, կամ շրջակա միջավայրին հասցված վնասը կարող են էական բացասական հետևանքներ ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.10.2024 15:57